ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՍՊԱՌՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐՈՒՄ ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՌՈԲԵՐՏ ԶՈՒԲԱՆՅԱՆ

ՍՄԿԿ XXVI համագումարը կոմունիստական շինարարության զարգացման ժամանակակից փուլի առանձնահատկությունների խորը վերլուծման հիման վրա, ելնելով սոցիալիզմի տնտեսական օրենքների օբյեկտիվ պահանջներից, բացահայտեց մեր երկրի էկոնոմիկայի հետագա զարգացման հեռանկարները։ Այս տեսակետից ուրույն տեղ ունի 11-րդ հնգամյակը։ Այն կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման նոր փուլ է, հասարակական արտադրության արդյունավետության, արտադրանքի որակի բարձրացման ու ժողովրդի բարեկեցության հետագա վերելքի ժամանակաշրջան։

Մեր երկրում սոցիալիստական արտադրության գերագույն նպատակին հասնելու նոր հնարավորություններ ստեղծվեցին զարգացած սոցիալիստական հասարակություն կառուցելու հետևանքով, որը բնութագրվում է արտադրության մասշտաբների և ժողովրդական սպառման ծավալի զգալի աճով, հասարակական-տնտեսական հարաբերությունների հասունության ավելի բարձր աստիճանով։

Ֆ. Էնգելսն ընդգծել է, որ մարդկության պատմության մեջ առաջին անգամ սոցիալիզմն է կյանքի կոչում «հասարակության բոլոր անդամների գոյության ոչ միայն լիովին բավարար և յուրաքանչյուր օր բարելավվող նյութական պայմանները, այլ նաև նրանց ֆիզիկական ու մտավոր ընդունակությունների լրիվ զարգացումն ու օգտագործումը»[1]։ Հասարակական արտադրության նպատակի մասին մարքսիստական տեսության այս սկզբունքային դրույթն իր հետագա զարգացումը գտավ Վ. Ի. Լենինի աշխատություններում։

Ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացն էականորեն բարձրացնում է գլխավոր արտադրողական ուժի՝ աշխատավորների, նրանց ընդունակությունների համակողմանի զարգացման և ստեղծագործական ակտիվության համար անհրաժեշտ բազայի ստեղծման նկատմամբ եղած պահանջները։ Սակայն այդպիսի բազայի ստեղծումը զգալիորեն կախված է կենսամակարդակից, նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման աստիճանից։ Դրա համար էլ ժամանակակից պայմաններում բարեկեցության բարձրացումը դարձել է արտադրության արագ աճի տնտեսական կարևոր նախադրյալներից մեկը։

Զարգացած սոցիալիզմը, խթանելով բանական պահանջմունքների[2] զարգացումը, միաժամանակ որոշում է ժողովրդական սպառման կարևորագույն

---

1 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Երևան, 1967, էջ 380։

2 «Բանական պահանջմունքներ» տերմինն առաջին անգամ օգտագործել է Ֆ. Էնգելսը (К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 19, с. 113).

առարկաների սպառման ռացիոնալ նորմաները։ Ըստ որում, հաշվի են առնվում ֆիզիոլոգիայի, հիգիենայի տվյալները և ժողովրդական սպառման աճի նրվում ապահովման ռեալ հնարավորությունները։ Ժողովրդական սպառման աճը բնակչության կենսամակարդակի ամփոփ ցուցանիշներից է։ Լ. Ի. Բրեժնևը, խոսելով կոմունիստական շինարարության ժամանակակից փուլում մեր էկոնոմիկայի զարգացման հանգուցային պրոբլեմների մասին, ՍՄԿԿ XXVI համագումարում հատուկ ընդգծեց, որ «ժողովրդի բարեկեցության հետագա վերելքն ընդգրկում է սովետական մարդկանց կյանքի բոլոր կողմերի լավացումը՝ սպառումը և բնակարանը, կուլտուրան և հանգիստը, աշխատանքի և կենցաղի պայմանները»[3]։ Զարգացած սոցիալիզմը նյութական և հոգևոր բարիքների սպառման կառուցվածքի պլանաչափ փոփոխությունն ապահովում է պահանջմունքների աճի օբյեկտիվ տնտեսական օրենքի պահանջներին համապատասխան։ Ժամանակակից պայմաններում այս օրենքը պահանջում է որպեսզի նյութական արտադրության և սպառման ոլորտի զարգացման ու կատարելագործման պայմաններում պահանջմունքների բավարարման մակարդակն աճի ոչ այնքան քանակական, որքան որակական տեսակետից։ Կապված վերոհիշյալ խնդիրների հետ՝ տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի սպառման նորմատիվներում պահանջմունքների արտացոլման հարցը և ռացիոնալ նորմաների հետ փաստացի սպառման մակարդակի մերձեցման պրոցեսի ուսումնասիրությունը։

Մարքս-լենինյան քաղաքատնտեսությունն ուսուցանում է, որ սպառումը վերարտադրության պրոցեսի վերջին փուլն է։ Պետք է տարբերել արտադրական (արտադրողական) և ոչ արտադրական կամ բուն սպառում կատեգորիաները։ Արտադրական սպառումը արտադրության բուն պրոցեսն է, իսկ ոչ արտադրական սպառումը մարդկանց կողմից սննդամթերքների, հագուստի, կոշիկի և այլնի սպառումն է։ Արտադրական սպառման ժամանակ արդյունքները ստեղծվում են, իսկ ոչ արտադրականում՝ օգտագործվում անձնական և հասարակական կարիքների համար։ Ոչ արտադրական սպառումը բաժանվում է բնակչության սպառման և ընդհանուր պահանջմունքների բավարարման։

Մեր կարծիքով, բնակչության սպառմանը պետք է վերադրել ամբողջ այն սպառումը, որի ընթացքում բավարարվում են մարդկանց անձնական պահանջմունքները պարենային, արդյունաբերական ապրանքների, երկարատև օգտագործման իրերի, ինչպես նաև կրթության, առողջապահության և այլնի նկատմամբ, անկախ բավարարման բնույթից, ձևերից ու եղանակներից։ Այդպիսի սպառումը կարող է անվանվել նաև անձնական։ Անհրաժեշտ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ այդ հարցի կապակցությամբ տնտեսագետները միակարծիք չեն։ Ավելին, որոշ տնտեսագետներ անձնական սպառումը հաճախ հայտարարում են «էկոնոմիկայից այն կողմ» և դրանով իսկ այն փաստորեն բացառում քաղաքատնտեսության հետազոտության ոլորտից[4]։

---

[3] Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1981, էջ 72։

[4] Б. Минц, Политэкономия, М., 1965, с. 15; О. Джамалов и соавторы, Развитие двух форм социалистической собственности и проблемы их сближения, Ташкент, 1965, с. 7; Г. Джавадов, Структура социалистических производственных отношений, М., 1969, с. 98.

Նրանք իրենց տեսակետը հիմնավորում են Կ. Մարքսի այն արտահայտությամբ, որ «...սպառումը... դուրս է գտնվում էկոնոմիկայի շրջանակից...»[5]։ Պարզ է, որ այս տեսակետի կողմնակիցներն անտեսում են Կ. Մարքսի ցուցումներն այն մասին, որ անձնական սպառումը երկակի պրոցես է[6]. նախ, այն ֆիզիոլոգիական պրոցես է, այսինքն՝ կենսամիջոցների անմիջական սպառում մարդու կողմից (սպառման հենց այս կողմն ի նկատի ուներ Կ. Մարքսը, նշելով, որ այն ընկած է էկոնոմիկայից դուրս), երկրորդ, անձնական սպառումը տնտեսական կատեգորիա է՝ վերարտադրության պրոցեսի վերջնական փուլը։ Այն փոխադրում է ելակետային փուլի՝ արտադրության վրա և դրանով իսկ սկիզբ հաղորդում ամբողջ պրոցեսին։ Կ. Մարքսն, ընդգծելով սպառման տնտեսական այս դերը, նշել է, որ այն «ստեղծում է նոր արտադրության կարիք, ուրեմն՝ արտադրության իդեալական, ներքին դրդապատճառ, որն արտադրության նախադրյալն է»[7]։ Վերոհիշյալից բխում է, որ անձնական սպառումը քաղաքատնտեսության վերլուծության օբյեկտ է։

ՍՍՀՄ-ն արդեն հասել է բնակչության սպառման և ապահովվածության բարձր մակարդակի։ Դա իր հերթին գործնական խնդիրների շարքն է դասում բնակչության նյութական և հոգևոր հիմնական պահանջմունքների առավել լրիվ բավարարման պրոբլեմը։ Այս խնդրի լուծումը նախատեսում է՝ առաջին, արտադրության հետագա զարգացում և կատարելագործում, երկրորդ, սպառման միջին մակարդակի հետագա բարձրացում և ռացիոնալացում։ Ռացիոնալացում ասելով պետք է նկատի ունենալ առանձին բարիքների սպառման չափերի համապատասխանեցումը բնակչության օբյեկտիվորեն պայմանավորված բանական պահանջմունքների մակարդակին և կառուցվածքին։

Սպառման ռացիոնալացման համար անհրաժեշտ է խոր վերլուծության ենթարկել արդեն ձևավորված պահանջմունքները, ուսումնասիրել դրանց զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները և նոր պահանջմունքների ձևավորումը, մշակել հիմնական պահանջմունքների քանակական գնահատականը, ինչպես նաև ստեղծել այդպիսի գնահատման մեթոդներ։

Այժմ անդրադառնանք «պահանջմունք» կատեգորիայի մարքս-լենինյան հասկացության համառոտ քննությանը։ Կ. Մարքսը պահանջմունքը բնութագրել է որպես սպառման «գրգիռ», սպառման «ունակություն»[8]։ Իսկ սպառումը, ինչպես հայտնի է, դրա բավարարման պրոցեսն է։ Այս բնորոշումից երևում է, որ սպառումը հավասարապես վերաբերում է ինչպես բնության, այնպես էլ մարդկային աշխատանքով ստեղծված բարիքների միջոցով բավարարվող պահանջմունքներին։

Տնտեսագիտական գրականության մեջ առկա են այս կատեգորիայի տարբեր բնորոշումներ։ Պ. Մստիսլավսկին այն բնորոշում է որպես մարդկանց կյանքի համար օբյեկտիվորեն անհրաժեշտ պայման[9]։ Մոտավորապես նույն տեսակետն է բաժանում Վ. Ռադաևը։ Նա գրում է. «Ավելի ճշգրիտ իմաստով

---

5 Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Երևան, 1948, էջ 240։

6 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 6, с. 22.

7 Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, էջ 243։

8 Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, էջ 246։

9 П. Мстиславский, Народное потребление при социализме, М., 1961, с. 23.

պահանջմունքներն իրենցից ներկայացնում են նյութական կյանքի պայմանների ընդհանրացված արտահայտություն...»[10]։ Ի. Կորժենեվսկու կարծիքով «պահանջմունքը հասարակական արտադրության և մարդու, որպես հասարակության հիմնական արտադրողական ուժի, անշեղ զարգացումն ապահովող նյութական, հոգևոր և սոցիալական որոշակի պայմանների հասնելու անհրաժեշտությունն է»[11]։ Ըստ Ա. Լևինի, «պահանջմունքն արտացոլում է նյութական և հոգևոր բարիքների արտադրության և օգտագործման առթիվ ձևավորվող հասարակական հարաբերություն, որում օբյեկտիվորեն արտահայտվում է սոցիալիստական հասարակության անդամների ակտիվ ձգտումը՝ հասնելու անձի համակողմանի զարգացումը և լիակատար բարեկեցությունն ապահովող կենսապայմանների»[12]։ Մեր կարծիքով, պահանջմունքի բովանդակությունն ավելի ճշգրիտ և խորը բացահայտված են վերջին երկու ձևակերպումներում, քանի որ ընդգծում են դրանց ակտիվ բնույթը և այն, որ պահանջմունքներն անմիջականորեն կապված են սոցիալիստական արտադրության գերագույն նպատակի հետ։

Բ. Ռակիտսկու՝ «պահանջմունք» կատեգորիայի մեկնաբանությունից հետևում է, որ այն արտահայտում է ոչ թե մարդկանց, այլ նրանց և շրջապատող միջավայրի հարաբերությունները[13]։ Իհարկե, պահանջմունքն անպայմանորեն արտահայտում է մարդու և շրջապատող բնության միջև եղած հարաբերությունը, սակայն այն արտացոլում է նաև մարդկանց միջև եղած հարաբերությունները։ Սակայն ըստ Բ. Ռակիտսկու ստացվում է, որ պահանջմունքները դրանով իսկ տնտեսական կատեգորիա չեն և դուրս են մնում քաղաքատնտեսության հետազոտության շրջանակից։ Անհրաժեշտ է շեշտել, որ Կ. Մարքսը «պահանջմունք» կատեգորիայի որակական բնորոշմանը զուգահեռ տալիս է նաև դրա ընդհանուր քանակական բնութագիրը։ Այսպես, նա խոսում է «անհրաժեշտ պահանջմունքների»[14], «շուկայում ներկայացված պահանջմունքների» կամ «պահանջարկի» և «իրական-հասարակական պահանջմունքի»[15] մասին, որը մեկ այլ տեղում անվանում է «հասարակության բացարձակ ապառողական ուժ»[16]։ Մարքսյան վերոհիշյալ դրույթից ելնելով՝ պետք է պարզաբանել պահանջմունքների բովանդակությունն ու դրսևորման ձևը և դրանց բավարարման մակարդակները։ Անհրաժեշտ է ընդգծել, որ պահանջմունքը և պահանջարկը, որպես դրա դրսևորման ձև, նույնը չեն։ Պահանջարկը քանակապես և որակապես տարբերվում է ինչպես իրական-հասարակական, այնպես էլ անհրաժեշտ պահանջմունքից։ Այստեղ ի նկատի ունենք այն հանգամանքը, որ պահանջարկն էապես փոքր է իրական-հասարակական պա-

---

10 В. Радаев, Потребности как экономическая категория социализма, М., 1970, с. 13.

11 И. И. Корженевский, Основные закономерности развития спроса в СССР, М., 1971, с. 36.

12 А. И. Левин, Научно-технический прогресс и личное потребление, М., 1979, с. 33.

13 Б. В. Ракитский, Что такое экономические методы хозяйствования, М., 1969, с. 32.

14 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 182։

15 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, առաջին մաս, Երևան, 1947, էջ 170։

16 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, առաջին մաս, էջ 227։

հանջմունքից և ըստ կառուցվածքի չի համընկնում անհրաժեշտ պահանջմունքների հետ։

Պահանջմունքների բավարարման բարձրագույն մակարդակն իրական-հասարակական պահանջմունքների (կամ հասարակության բացարձակ սպառողական ուժի) բավարարումն է։ Այն բնութագրում է սպառողների պոտենցիալ հնարավորությունները, որոնք պայմանավորված են արտադրության և կուլտուրայի զարգացմամբ։ Անհրաժեշտ է ընդգծել, որ որոշակի նյութական պայմաններով դրանք չեն սահմանափակվում։ Պահանջմունքների բավարարման ավելի ցածր մակարդակն անհրաժեշտ պահանջմունքների բավարարումն է։ Պահանջմունքների այս ծավալը հնարավոր է բավարարել յուրաքանչյուր տվյալ պահին, քանի որ արտադրության և սոցիալական պայմանները դրա համար ստեղծում են անհրաժեշտ իրական հնարավորություններ։

Մարքսյան վերոհիշյալ տեսական դրույթները վերաբերում են նաև զարգացած սոցիալիզմի փուլին։ Այսպես, դեռևս էական տարբերություններ կան իրական-հասարակական և անհրաժեշտ պահանջմունքների բավարարման մակարդակների, ինչպես նաև պահանջարկի և իրական-հասարակական պահանջմունքների միջև[17]։ Ինչպես նկատել է Կ. Մարքսը, «այն սահմանները, որոնց շրջանակում ապրանքների նկատմամբ շուկայում ներկայացված պահանջմունքը-պահանջարկը-քանակապես տարբեր է իրական-հասարակական պահանջմունքից, իհարկե շատ տարբեր են տարբեր ապրանքների համար. ես նկատի ունեմ այն տարբերությունը, որ ստեղծվում է ապրանքների պահանջվող քանակի ու այն քանակի միջև, որ կպահանջվեր իրոք ապրանքի գնի փոդային այլ արտահայտությունների դեպքում կամ թե գնորդների փոդային կամ կենսական այլ հարաբերությունների դեպքում»[18]։

«Պահանջմունք» կատեգորիան ուսումնասիրելիս այն պետք է դիտել նախ, որպես սպառողների (առանձին մարդկանց, մարդկանց խմբերի և այլն) ներքին վիճակ, երկրորդ, որպես այդ ներքին վիճակի արտաքին դրսևորում։ Այն տվյալ պահանջմունքը բավարարելու ընդունակ բարիքների որոշակի քանակության անհրաժեշտություն է։ Ընդ որում, պլանավորման առումով կարևոր է պահանջարկի ուսումնասիրությունը։ Այսպիսով, «պահանջմունք» կատեգորիան ավելի ճիշտ կլինի օգտագործել այն դեպքում, երբ բնութագրվում է սպառողների ներքին վիճակը, իսկ պահանջմունքի արտաքին կողմի դրսևորման ժամանակ պետք է օգտագործել «պահանջարկ» կատեգորիան։

Սպառողական բարիքների նկատմամբ բնակչության պահանջմունքը բացահայտելիս անհրաժեշտ է որոշել նրանց իրական-հասարակական ու անհրաժեշտ պահանջմունքները և պահանջարկը։ ՍՍՀՄ պլանավորման պրակտիկայում պահանջմունքների արտացոլման համար մշակված է նորմատիվային մեթոդ։ Այդ մեթոդի էությունն այն է, որ այս կամ այն բարիքի պահանջմունքի որոշման ժամանակ համապատասխան ցուցանիշները ձևավորվում են ելնելով դրանց համակարգի գիտական նկատառումներից և այս կամ այն ձևերի ռացիոնալ լինելուց, ինչպես նաև սպառման փաստացի մակարդակից և առանձին պահանջմունքների բավարարման եղանակներից։

---

17 Այդ տարբերությունները մատնանշված են Վ. Մայերի գրքում (В. Ф. Майер, Уровень жизни населения СССР, М., 1977, с. 96):

18 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, առաջին մաս, էջ 170։

Ժողովրդի կենսամակարդակի պլանավորման պրակտիկան մեր երկրում մշակել է նորմատիվային մեթոդի իրացման միջոց։ Դրա նպատակը բնակչության նյութական բարիքների սպառման և ապահովվածության նորմաների մշակումն է։ Որոշ նորմաների հիման վրա կազմվում է նորմատիվային սպառողական բյուջե։ Մասսայական սպառման բարիքների նկատմամբ բնակչության բանական պահանջմունքների բավարարման նպատակով կազմվող բյուջեն կոչվում է ռացիոնալ սպառողական բյուջե։ Դրա կառուցման ու հաշվարկման սխեմաները և մեթոդիկան արտացոլված են 1974 թ. հրատարակված «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանների մշակման մեթոդական ցուցումներում»։ Դրանցում վերոհիշյալ բյուջեի մշակման հիմնական նպատակը բնորոշվում է հետևյալ կերպ. «Նյութական բարիքների արտադրության բարձր մակարդակի և սպասարկման համակարգի լայն զարգացման պայմաններում ընդհանրացված ձևով ցույց տալ բնակչության պահանջմունքների կառուցվածքի և մակարդակի գիտականորեն հիմնավորված հիպոթեզը և ստեղծել մի չափանիշ, որի հետ ընթացիկ եկամուտների և սպառման համեմատությունը հնարավորություն կտա ձեռնարկել բնակչության պահանջմունքների լիակատար և համակողմանի բավարարումն ապահովող կոնկրետ տնտեսական միջոցառումներ»[19]։ Սակայն սպառման և ապահովվածության նորմատիվները չպետք է անմիջական կախվածության մեջ դնել արտադրության հնարավորություններից, որովհետև այդ նորմատիվների ֆունկցիաներից մեկն այն է, որպեսզի դրանց հիման վրա արտադրության առջև խնդիր դրվի արտադրել անհրաժեշտ բարիքներ։ Այնուհետև, ռացիոնալ նորման պետք է տարբերել համապատասխան պլանային ցուցանիշից, որովհետև վերջինս, ելնելով արտադրության իրական հնարավորություններից, կարող է ռացիոնալ նորմայից մեծ կամ փոքր լինել։ Այստեղից բխում է, որ պլանային սպառողական բյուջեն ռացիոնալ սպառողականից պետք է տարբերել։ Առաջինը սպառման պլանային ցուցանիշների ամբողջությունն է։

Ռացիոնալ սպառողական բյուջեի առաջին տարբերակները կիրառվել են 1950-ական թվականների վերջին և 1960-ական թվականների սկզբին։ Այս բնագավառում աշխատանքներն ավելի ակտիվացվեցին 1970-ական թվականների սկզբից։ Այդ ժամանակաշրջանում արդեն կազմվեց անհատական սպառողական բյուջեի տարբերակը[20]։

Սննդամթերքների, արդյունաբերական ապրանքների և ծառայությունների նկատմամբ բնակչության պահանջմունքների բավարարման ռացիոնալ նորմաները մշակվել են բժշկական գիտությունների ակադեմիայի սննդի ինստիտուտի և ՍՍՀՄ մի շարք գիտահետազոտական հիմնարկությունների ու կազմակերպությունների կողմից։ Հայկական ՍՍՀ պետպլանին կից էկոնոմիկայի և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտը, հաշվի առնելով մեր հանրապետության բնակլիմայական, ազգային և այլ առանձնահատկությունները, այդ նորմաները զգալիորեն ճշգրտել է։

---

19 «Методологические указания к разработке государственных планов развития народного хозяйства СССР», М., 1974, с. 483.

20 Մանրամասն տե՛ս Н. Я. Кириченко, Рациональный потребительский бюджет населения СССР, М., 1974.

Բնակչության սննդի նորմաների հիմքում դրված է բալանսավորված սնման անհրաժեշտությունը, որն ընդգրկում է մարդու համակողմանի ֆիզիկական զարգացումը, օրգանիզմի պահանջմունքն ապահովող սննդամթերքների բոլոր տարրերը։ Սննդի ինստիտուտի մշակած սննդամթերքների սպառման նորմաներում ՍՍՀՄ մեկ բնակչի հաշվով օրական կերակրաբաժնի ընդհանուր կալորիականությունը ընդունված է մոտ 3000 կալորիա, ըստ որում, հյուսիսային շրջանների համար այն բարձր է։ Բացի այդ, հաշվի է առնված սննդանյութերի առավելագույն հարաբերակցությունը։

Մեր հանրապետության բնակչության կողմից առանձին սննդամթերքների սպառման մակարդակը, ինչպես նաև բնակլիմայական, ազգային և այլ առանձնահատկությունները պահանջ են դնում որոշակի ճշգրտումներ կատարել երաշխավորվող կալորիականության և սննդանյութերի կազմում։ Այդ աշխատանքներին մեծապես նպաստում է փաստացի սպառման մակարդակի ուսումնասիրությունը։ Այսպես, բնակչության մեկ շնչի հաշվով հացամթերքների սպառման մակարդակը 1960 թ. կազմել է 185 կգ, որը տարեցտարի կրճատվելով 1979 թ. կազմել է 143 կգ և այլն[21]։ Դրանց սպառման այդ միտումը կշարունակվի առաջիկայում ևս։ Դրա համար էլ հացամթերքների սպառումը մինչև 2000-ական թվականները նախատեսված է 125 կգ-ի սահմաններում։ Սպառման նորմաներից երևում է, որ կրճատված են բուսական յուղի, ձկնամթերքների և այլնի նորմաները։ Համապատասխան հաշվարկներից պարզ է դառնում, որ հանրապետությունում դեռևս 1975 թ. կաթնամթերքների սպառումը զգալիորեն ավելի էր ռացիոնալ նորմայից։ Ուստի 330 կգ-ի փոխարեն հաշվարկներում ընդունված է 395 կգ։ Որոշակի չափով ավելացված են նաև բանջարաբոստանային կուլտուրաների սպառման նորմաները, որոնց փաստացի սպառումը (մեկ բնակչի հաշվով) 1979 թ. կազմել է 110 կգ[22]։ Հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ հանրապետության լեռնային շրջանների բնակչությունը դեռևս չի ապահովված անհրաժեշտ քանակի, տեսականու և որակի մթերքներով (հատկապես բանջարեղենով, մրգերի առանձին տեսակներով և այլն)։ Ժողովրդական սպառման ապրանքների արտադրության հետագա աճի հետևանքով հնարավոր կլինի բարձրացնել այդ շրջանների բնակչության փաստացի սպառման մակարդակը։ Մի շարք մթերքների գծով որոշված են դրանց թարմ վիճակում սպառելու չափերը, օրինակ, բանջարեղենի՝ 70, խաղողի՝ 90, պտուղների՝ 75 %-ը և այլն[23]։

Կարևոր փոփոխություններ ու ճշգրտումներ են կատարված նաև արդյունաբերական կարևորագույն ապրանքների ռացիոնալ նորմաներում։ Այսպես, ելնելով հանրապետության բնակլիմայական պայմաններից և փաստացի սպառման ավելի ցածր մակարդակից (համեմատած միջին միութենականի հետ), իջեցվել են բամբակյա և բրդյա գործվածքների սպառման ռացիոնալ նորմաները և ավելացվել մետաքսե ու վուշե գործվածքեղենինը։ Օրինակ, հանրապետությունում[24] գործվածքեղենի սպառման նորմաների ընդհանուր ծավալը մեկ շնչի հաշվով կազմում է 43,4 մ², այդ թվում բամբակեղենինը՝

---

21 «Народное хозяйство Армянской ССР за 60 лет», Ереван, 1980, с. 221.

22 Նույն տեղում։

23 «Рациональные нормы», Ереван, 1977, с. 2—3.

24 Նույն տեղում, էջ 3։

25,4, բրդեղենինը՝ 3, մետաքսյա գործվածքեղենինը՝ 10, վուշեղենինը՝ 5 մ²։ ՍՍՀՄ միջին նորմաները[25] համապատասխանաբար կազմում են 50, 28,4, 3,8, 9,1, 4,5 մ²։ Տրիկոտաժե արտադրանքի սպառման նորմաները թողնված են միջին միութենական մակարդակին 13,4 հատ (այդ թվում վերնազգեստինը՝ 4, իսկ սպիտակեղենինը՝ 9,4 հատ)։ Իջեցված են գուլպեղենի և կոշկեղենի սպառման նորմաները[26]։ Անհրաժեշտ է նշել, որ հանրապետությունում թեթև արդյունաբերության արտադրանքի փաստացի սպառումը զգալիորեն ետ է մնում ռացիոնալ նորմաներից։

Մեր հանրապետության բնակչության (100 ընտանիքի հաշվով) երկարատև օգտագործման իրերով ապահովվածության ռացիոնալ նորմաները մի շարք իրերի գծով թողնված են միջին միութենական նորմաների մակարդակին։ Իջեցված են միայն մոտոցիկլերի, մոտոռոլերների, մոպեդների և հեծանիվների նորմաները։ ՀՍՍՀ բնակչության փաստացի ապահովվածությունը սառնարաններով 1979 թ. կազմել է 101 հատ, որը զգալիորեն բարձր է միջին միութենական մակարդակից (82 հատ)[27]։ Ելնելով դրանից և բնակլիմայական պայմաններից, սառնարաններով ՀՍՍՀ բնակչության ապահովվածության նորման (100 ընտանիքի համար) սահմանվել է 120 հատ։

Տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի նաև սպառման փաստացի մակարդակի և ռացիոնալ նորմաների մերձեցման պրոցեսի ուսումնասիրությունը։ Զարգացած սոցիալիզմին բնորոշ է բնակչության կողմից սպառվող ապրանքների աճը և այն սպառման նորմաներին մերձենալը։ Դա պետք է բացատրել հասարակական արտադրության աճով, ժողովրդական սպառման ապրանքների արտադրության մեջ գիտատեխնիկական նվաճումների ներդրմամբ, բնակչության ռեալ եկամուտների և ընդհանուր կենսամակարդակի բարձրացմամբ։ Առանձին ապրանքների փաստացի սպառման մակարդակը ռացիոնալ նորմաներին մերձենալու գործում էական դեր են խաղում նաև բնակչությանը սպառման հասարակական ֆոնդերից տրվող եկամուտների աճը, նրա դեմոգրաֆիկ կառուցվածքի փոփոխությունը և այլն։

Ռացիոնալ նորմաների հետ փաստացի սպառման մակարդակի մերձեցումը կարելի է դիտարկել սննդամթերքների, արդյունաբերական ապրանքների և երկարատև օգտագործման իրերի օրինակով։ Այդ օրինաչափության դրսևորման առանձնահատկություններն ավելի լրիվ բացահայտելու համար պետք է վերլուծել պահանջմունքի բավարարման աստիճանը բնորոշող ցուցանիշի դինամիկան։ Այդ ցուցանիշը հաշվարկվում է տվյալ ապրանքի փաստացի սպառման մակարդակը սպառման ռացիոնալ նորմային հարաբերելու միջոցով։ Տնտեսագիտական գրականության մեջ որոշ ապրանքների փաստացի սպառման մակարդակի և ռացիոնալ նորմաների մերձեցումը հաճախ բնութագրվում է որպես պահանջմունքների բավարարման աստիճանի բարձրացում[28]։ Այս տեսակետը ճիշտ չէ, որովհետև սպառման գիտականորեն հիմնավորված նորմաներն ուղղված են ոչ թե սննդի բարելավմանը, այլ օրգանիզմին ան-

---

[25] В. Ф. Майер, նշվ. աշխ., էջ 105։

[26] «Рациональные нормы», с. 3.

[27] «Народное хозяйство Армянской ССР за 60 лет», с. 222; «Народное хозяйство СССР в 1979 г», М., 1980, с. 433.

[28] А. И. Левин, Научно-технический прогресс и личное потребление, М., 1979, с. 161—162.

հրաժեշտ սննդանյութերի սպառմանը, այսինքն մարդու կերաբաժնում որոշակի քանակի բանջարեղենի, մրգերի, կենդանական յուղի, մսի, ձվի, հացամթերքների և այլնի պարունակության ապահովմանը։

Վերոհիշյալ ցուցանիշի դինամիկան ըստ հիմնական սննդամթերքների, արդյունաբերական ապրանքների և երկարատև օգտագործման իրերի ցույց է տրված ստորև բերվող աղյուսակում։ Նրա տվյալների վերլուծությունից երևում է, որ հիմնական սննդամթերքների փաստացի սպառման մակարդակի և նորմաների մերձեցումը դիտվում է այդ խմբի բոլոր ապրանքների գծով։

Ժողովրդական սպառման ապրանքների փաստացի սպառման մակարդակի դինամիկան[29]

Ցուցանիշները	Սպառման փաստացի մակարդակը (ապահովվածությունը) % սպառման ռացիոնալ նորմաների և ապահովվածության նորմաների նկատմամբ				
	1960 թ.	1965 թ.	1970 թ.	1979 թ.	1979 թ. % 1960 թ. նկատմամբ
Հաց և հացամթերքներ	149,1	141,8	135,5	126,4	84,8
Կարտոֆիլ	147,4	146,4	134	122,6	83,2
Բանջարեղեն	47,9	49,3	56,1	65,1	135,9
Մրգեր և պտուղներ	19,5	24,8	31	33,6	172,3
Շաքար	70	85,5	97	107	152,8
Բուսական յուղ	58,9	78,9	75,6	93,3	158,4
Միս և մսամթերքներ	48,8	50	58,6	70,7	144,8
Ձուկ և ձկնեղեն	54,4	69,2	84,6	90,1	165,6
Կաթ և կաթնամթերքներ	59,3	62	75,8	78,8	132,9
Ձու	40,4	42,5	54,5	79,8	197,5
Բոլոր սննդամթերքների միջինը	59,9	66,2	73,3	81,1	130
Գործվածք-ամբողջը այդ թվում՝	52,2	53	60,8	66,4	127,2
Բամբակյա	67,6	67,3	75,6	80,3	118,8
Բրդյա	57,9	65,8	71	73,8	127,5
Մետաքսյա	37,4	39,6	51,6	68,1	182,1
Վուշե	29	28,9	40	31,8	109,6
Վերնազգեստ	15	22,5	45	52,5	350
Սպիտակեղեն	24,5	35,1	37,2	47,3	193,1
Գուլպեղեն	59	69,9	72,3	83,7	141,9
Կաշվե կոշիկ	52,8	66,7	83,3	84,2	159,5
Բոլոր արդյունաբ. ապրանքն. միջինը	43,9	49,9	59,7	65,3	140
Բոլոր տեսակի ժամացույց	44	49,1	62,2	77,8	176,8
Ռադիոընդունիչ և ռադիոլ	32,9	42,1	51,4	60	182,4
Հեռուստացույց	6,4	19,2	40,8	66	10,4 անգամ
Սառնարան	3,6	10	29,1	74,6	20,7 »
Լվացքի մեքենա	5,6	29,2	72,2	82,3	14,7 »
Էլեկտրական փոշեծծիչ	4,6	10,8	18,5	40	8,7 »
Մոտոցիկլ և մոտոռոլեր	26,7	40	46,7	50	187,3
Հեծանիվ և մոպեդ	65	80	83,3	98	150,8
Բոլոր երկարատև օգտագործման իրերի միջինը	23,6	35	50,5	68,6	290

29 Աղյուսակը կազմված է ըստ «Народное хозяйство СССР в 1972 г», М., 1973, с. 557—558; «Народное хозяйство СССР в 1979 г.», М., 1980, с. 432—433; В. Ф. Майер, *նշվ. աշխ., էջ 102, 105։*

Այդ պրոցեսը հիմնականում տեղի է ունենում սննդամթերքների փաստացի սպառման աճի միջոցով։ Սակայն որոշ սննդամթերքների, մասնավորապես, կարտոֆիլի և հացամթերքների հարցում այդ պրոցեսը կատարվում է հակառակ ուղղությամբ, այսինքն՝ դրանց միջին սպառումը տարեցտարի կրճատվում է։ Դրա հետևանքով փաստացի սպառումը նույնպես մերձենում է նորմաներին։ Տվյալները վկայում են, որ սննդամթերքների բավարարման միջին աստիճանը մշտապես բարձրանում է։ Այսպես, եթե 1960 թ. այն կազմել է 59,9, իսկ 1970 թ.՝ 73,3, ապա 1979 թ.՝ 81,1 %։

Ի տարբերություն սննդամթերքների, արդյունաբերական ապրանքների ռացիոնալ սպառման քանակական սահմանների որոշման ժամանակ հնարավոր չէ հիմնվել մարդկային օրգանիզմի ֆիզիոլոգիական պահանջմունքների վրա։ Սակայն այդ բնագավառի օրինաչափությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս խոսել հագուստի, սպիտակեղենի, երկարատև օգտագործման իրերի ռացիոնալ օգտագործման օբյեկտիվ սահմանների մասին։ Հետևաբար, այս խմբի ապրանքների սպառման ռացիոնալ նորմաների սահմանման ժամանակ բնակլիմայական պայմանները՝ խոնավությունը, տեղումների քանակը, տաքությունը և այլն, գիտվում են որպես այդ պահանջմունքների նորմաների որոշման օբյեկտիվ գործոններ։

Փաստացի սպառման և նորմաների մերձեցումը բնորոշ է նաև արդյունաբերական կարևորագույն ապրանքների խմբին։ Աղյուսակի տվյալներից երևում է, որ գործվածքեղենի, տրիկոտաժեղենի, գուլպեղենի և կաշվե կոշկեղենի սպառման բնագավառում կատարվում է նույնը։ Դա հնարավորություն է տալիս բարձրացնելու այս խմբի ապրանքների պահանջմունքի բավարարման միջին աստիճանը։ Այսպես, 1960 թ. այն կազմել է 43,9, 1970 թ.՝ 59,7, 1979 թ.՝ 65,3 %։

Վերոհիշյալ պրոցեսն ավելի արագ տեմպերով տեղի է ունենում երկարատև օգտագործման իրերի սպառման բնագավառում։ Այսպես, այս խմբի գծով պահանջմունքի բավարարման միջին աստիճանը 1960 թ. կազմել է 23,6, 1970 թ.՝ 50,5, իսկ 1979 թ.՝ 68,6 %, այսինքն՝ 1979 թ. այն 1960 թ. նկատմամբ աճել է մոտ 2,9 անգամ, երբ հիմնական սննդամթերքների գծով աճը կազմել է 30, իսկ արդյունաբերական ապրանքներինը՝ 40 %։

Այսպիսով, զարգացած սոցիալիզմի փուլում տեղի է ունենում ոչ միայն փաստացի սպառման աճ, այլև, որպես օրինաչափ երևույթ, դրա զգալի մերձեցում (իսկ որոշ ապրանքների գծով նաև գերազանցում) ռացիոնալ նորմաներին։

КАТЕГОРИЯ ПОТРЕБНОСТЬ И ЕЕ ОТРАЖЕНИЕ В НОРМАТИВАХ ПОТРЕБЛЕНИЯ В УСЛОВИЯХ РАЗВИТОГО СОЦИАЛИЗМА

РОБЕРТ ЧОБАНЯН

Резюме

В условиях развитого социализма научная обоснованность народного потребления приобретает большое значение. Развитой социализм, стимулируя развитие разумных потребностей, одновременно определя-

ет рациональные нормы потребления важнейших товаров народного потребления. В связи с этим практика планирования потребностей в нашей стране показывает, что для оценки потребностей следует исходить из нормативного метода. Суть этого метода заключается в том, что при определении потребностей соответствующие показатели формируются с учетом научных представлений о системе потребностей и рациональности тех или иных видов, а также уровней потребления и форм удовлетворения отдельных потребностей. Для реализации этого метода разрабатываются нормативы потребления и обеспечения населения материальными благами и услугами.

Сопоставление фактического уровня потребления с рациональными нормами потребления имеет большое практическое значение. Исходя из этого можно разработать конкретные экономические меры, направленные на дальнейшее повышение степени удовлетворения потребностей населения.